


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ  
Ե. ՓՈՐՐՈՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի  
ԳԱԼԻԷ (եգիպտոս)

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՇԱՐԱԹ	
Տարեկան որդ դահիւն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղութեամբ  
գրութիւնք է՝ նկ տրուիլ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ  
Կանխիկ վճարելի են

ԱՄՈՒՍՆԵԱՆ ԿԵԱՆՔԸ

—x—

Առ Հայ Մտնողս

(Շարն. նախորդ թիւին)

Ճշմարիտ, անբիծ ու անձնուէր սէր՝ քիչ  
կը գտնուի : Այս թանկագին առաքելութիւնը  
կիստ հազուադէպ է : Ընդհանրապէս կիրքն է  
որ սէր կը համարուի ու կը պաշտուի մոլորական  
բար : Բազմաթիւ կիսեր իրենց սեռին սեփական  
եղով փափկութեան ազնիւ զգացումները բոլոր  
բովի կորուսած են, ամուսիններու բիրտ,  
վայրագ վարմանց հետեւանք, որք ամուսնա-  
կան իրաւամբ ներքի ըլլալ կը կարծուին : Կիսե-  
րը վերջապէս կը հասկնան որ մը, բայց ար-  
ստ՝ որ ուշ, թէ այդպիսի ամուսնոյ մը սէրը  
ամենագոնէ քնաւորութիւն մ'էր, եւ պժգանօք  
միայն կ'անդրադառնան այդ անցեալ կեանքի  
եղբարեան արուածներուն վրայ :

Այս կարգի ընտանիքներէն շատեր ապեր-  
ջանիկ ու ամենակէք կեանք մը կ'անցընեն,  
ըստ որում, ամուսին-հայրը իր անասնական  
քնաւորութեան կը թողարկէ իր մէջ կտաւա-  
րելու մտաւորական ու բարոյական իշխանու-  
թիւնը, որոյ ընդ փոյթ կը յաջորդէ մեղկ ու  
տկար վիճակ մը, զուտուրեք վերագրուած  
խնկական պատճառին : Մարդկութեան օգտակար  
ըլլալու եւ Աստուծոյ կատարելալ ծառայութիւն  
մատուցանելու համար, մեր հոգին անարատ ու  
մարմինն անտղջ պահելու վաւերական պար-  
տաւորութեան մէջ կը գտնուինք Աստուծոյ առ-  
ջես :

Ամբարշտութիւնը, ոճիւրը եւ հեշտասիրու-  
թիւնը զարգացեալ կարծուած դասակարգին մէջ  
եւս գոյութիւն ունին : Մինչեւ իսկ Աստուծոյ  
պատուիրանները պահել գաւառող եկեղեցիներ  
ընդ մէջ անհամար կեղծաւոր օրինակներ կան :  
Դժուարութիւններն ու փորձութիւնները չեն,  
այլ մեղքն է, որ կը բաժնէ Աստուծոյ իր ժո-  
ղովուրդը, եւ մարդը՝ հաճոյքն Աստուծոյ մէջ  
գտնելու եւ զայն փառաւորելու ապիկարութեան  
կը մատնէ : Մեղքն է որ կը փճացնէ հոգիները,  
եւ մեղքն ու մոլորութիւնը անբասի, քրիստոնեայ  
եղած ըլլալ յաւակնող ընտանիքներուն ծոցին  
մէջ ալ իրականութիւն ունին : Բարոյական  
աղաք բոլոր աղէտներէն աւելի նպաստած է սե-  
ռին այլասերման :

Յոռի սովորոյթները վրդովել յառաջդիմու-  
թիւններ կ'ընեն ընկերութեան մէջ, եւ ամեն  
տեսակ հիւանդութիւններու պատճառ կ'ըլլան :

Ընդհանրապէս ծնողք չեն երկբայիլ թէ՛ Ե-  
րենց տղայք պիտի մոլորութեան վրայով բան մը  
գիտեն : Բազմաթիւ պարագաներու մէջ իրաւա-  
ցի յանցապարտները հայրերն ու մայրերն են :  
Ամուսնական միտաշնորհները չարաչար գործա-  
ծելով իրենց կրից մեղապարտ անփութութեամ-  
բ կը զօրացնեն յինքեան անասնական բնա-  
ւորութիւնը, մինչդեռ տակաւ՝ անշուք ու ժա-  
պտ կ'ըլլան բարոյական ու մտաւորական կա-  
րողութիւնները : Անբան բնութիւնը, ներկայիս  
մէջ, կը գերազանցէ հոգեկանը : Տղայք, իրենց  
ծնողքներէն ժառանգած արամադրութեանց հա-

մեմատ, աւելի անասնական կիրքերու հակամէտ  
կը ծնանին : Զգայական փափուկ գործարաննե-  
րուն հակադրական գործողութիւնը գրգռոյթ կը  
պատճառէ : Զգային դրութեան կեդրոնը, այս  
գիւրաբար գործարաններու շարժմամբ՝ վայր-  
կենաբար յառաջ ելող վազանցուկ սփոփանքէն  
արբշիւ, կ'ընդարձանայ : Բնածին զգացումներ  
ընդ կը յաջորդեն ցնորական երազներէ եւ ե-  
րեւոյթներէ ծագուած՝ անսող խօլ բազմանքներ  
ու կիրք : Հոգին կը մթանայ : միտքը կը զբը-  
կուի իր խորհրդածելու եւ զանազանելու ան-  
զուգական յատկութիւններէն : Մէքն է որ կը  
տիրէ, իսկապէս կը շրջապատէ համակ էութիւն-  
ըն, եւ ստակալի արտը հետզհետէ կը վատթա-  
րանայ, որուն բունակալ ճիւղներուն ներքեւ  
ու՛ր ուրեմն կը կըքի կամքը : Կազմական-դրու-  
թեան վրայ անոր ըրած անուի ներդրութիւն-  
ները օրըստօրէ կ'զգացուին : Ըզեզը բոլորովին  
կը տկարանայ : կը բթանայ յիշողութիւնը : կը  
վատի աչքերուն լոյսը, եւ հազիւ կը պլպլայ  
կեանքի յոյսը՝ որոյ հանդէպ ինքն իսկ մարդը  
տիկարեկիր կը մնայ յաւատ : Այս կարգի ծը-  
նողքներէ սերած դուստները, գրեթէ ամանց  
բացառութեան, օնանական ստակալ մեծամտու-  
թեան կուսան իրենք զիրենք :

Ամուսնական միտադրութիւնը թէեւ նուր-  
բական, բայց ինչ ոճիւրներ ու պղծութիւններ  
կը քողարկէ : Իրենց մարմինները գեղձանելու  
համար, ինքզինքնին ամուսնական կապերէն  
ազատ կարծողները, երբ վայրենաբար անաս-  
նական կրից անձնատուր կ'ըլլան, կրնան ա-  
պահով ըլլալ թէ՛ անտարակոյս իրենց յոռի մի-  
տուները պիտի յաւերժանան զարմեքունն բը-  
նաւորութեանց մէջ : Մերդաց մեղքերը իրենց  
որդոց վրայ պիտի յայտնուին, որովհետեւ բը-  
նականապէս այս վերջնոց պիտի հաղորդեն ի-  
րենց վաւառտ հակումները :

Հեղինակ ՏԻԿ. Ե. Կ. ՀՈՒԱՅԻՐ  
Ազատ թարգմ. Կ. Գ. ՈՒՉՈՒՆԵԱՆԻ

ԱԶԲԵՐՆԻՍ ԲԱՆԱՆՔ

Ի՞նչ կ'ընեն Թրքերը PRO-ARMENIAի  
երևումին համար :

(Շարն. նախորդ թիւին եւ վերջ)

« Եթէ քաղաքակրթութեան ընդունա-  
կութիւն ըսելով — կը պոռայ մեր ոխերով  
թշնամին — կաթոլիկութեան եւ բողոքական-  
նութեան դիմելը կը հասկցուի, այդ ժա-  
մանակ խմբագրութիւնը կատարելապէս ի-  
րաւունք ունի, հայերը այդ մասին ինք-  
զինքնին աւելի ընդունակ ցցուցած են,  
քան թէ արեւելեան օւրիշ ազգերը » :

Կարծեմ բոլորովին աւելորդ է այդ  
պաշտոն սուտին պատասխանելը : Ի՞նչ ազգ,  
զուն մեզմէ շատ լաւ գիտես թէ հազար-  
ներով Հայեր նախադաս համարեցին մեռ-

նիլ՝ քան թէ Իսլամութիւնը ընդունիլ եւ այ-  
սօր իսկ կրնանք պարծանօք ըսել թէ տաս-  
նեակ հազարաւոր սովալուրկ Հայեր կան,  
որք նախադաս կը համարին չոր հայ մը կըր-  
ծելով կէս քաղցած անցնել, քան թէ ի-  
րենց կրօնքին գիտովը իրենց նուիրուած  
պատուական կերակուրներ ուտել, դուն  
շատ լաւ գիտես, որ Հայերը՝ փոքր Ասիոյ  
ամենէն շատ կրօնքի փարած ժողովուրդն  
են եւ հազարաւոր տարիներէ ի վեր անխախտ  
ու անսասան մնայած են իրենց պապեանական  
հաւատքին մէջ :

« Քանի որ քննադատութեան հոգին վը-  
րայ կը գտնուինք, կը յաւելու Ահմէտ Ռի-  
զա, մեր բարեկամ Բիէր Բիւար, որուն  
վեհանձն զգացումները կը ճանաչենք, մե-  
զի ռիսակալ չպիտի մնայ, եթէ իր խմբագ-  
րած լրագրին ընարած տիտղոսին վրայ փոք-  
րիկ գիտնադրութիւն մը ընենք » :

« Pro Armenia, եթէ չենք սխալիր,  
Հայաստանի համար ըսել է. այսինքն պղղ-  
տիկ երկրի մը համար, որ ժամանակին  
« Հայաստանի Թագաւորութիւն » կը կոչ-  
ուէր, եւ այսօր Ռուսիոյ, Պարսկաստանի  
եւ Թուրքիոյ միջև բաժնուած է : Հայաս-  
տանի այն բաժինը՝ որ Օսմանեան Կայսրու-  
թեան մասը կը կազմէ, բնակուած է Արար,  
Բիւրտ, Թուրք, Յոյն, Հայ, Լազք Զէր-  
քէզ ժողովուրդներէ եւ Հայաստանի թա-  
գաւորութեան կողմնակիցներու դժբաղդու-  
թեանէն, Հայ տարրը ամէն տեղ վնաս-  
մանակից կը կազմէ : Արեւօք այդ թա-  
գաւորութեան վերահաստատման եւ կամ  
ուրիշ բաւերով, Օսմանեան Կայսրութեան  
անդամահատման կը ձգտի նոր թերթը .  
իր տիտղոսը մեզի այդպէս կարծեցնել կու-  
տայ : Բայց սակայն դեռ որոշապէս քա-  
ղաքական ծրագիր չունի : Եթէ իր առա-  
ջագրած նպատակը այդ է, պիտի ստիպ-  
ուինք, ցաւ ի սիրտ, մեր բոլոր ուժերով  
կուռիլ անոր դէմ, Բիւրտերն ու Արար-  
ներն ալ իրենց կարգին հրացանի հատուած-  
ներով պիտի պատասխանեն իրենց իրաւանց  
դէմ եղած այդ բռնաբարմանը . գալով  
Թուրքերուն եւ Պարսիկներուն, անոնք ալ  
կարծենք անտարբեր չպիտի կենան այն  
պայքարին հանդէպ, որ իրենց ամբողջու-  
թեան կ'սպառնայ » :

Ի՞նչ կուտանք Բիզա տղայի թէ՛ Պ.  
Բիւրտը անպատուած կ'ըլլայ զայն իր  
բարեկամը կոչելով, եւ թէ՛ այդ մեծ Պրան-  
սացիները որոշ եւ լաւ համազուած սկզբուն-  
քով հիմնած են այդ թերթը, որ կարելի  
եղածէն աւելի պիտի ձգտի Բիզա էֆէնդիին  
վախցած բանը իրականացնելու : Այո՛ . ինքզ

ՇՆՈՐՀԱՆՈՒԹ

ու կրակ մարդ, Pro Armeniaն Հայաստանի դժբաղդութեանց արձագանքը պիտի ըլլայ և ամեն տեղ իր արդար ու զօրաւոր ձայնը պիտի գոռացնէ թիւրք բռնակալութեան դէմ, և ձեզի նման դիմակաւոր ինկածներուն կեղծիքով լի թակարդները ի գերեւ պիտի հանէ, զուր տեղը պիտի ջանաք ձեր վարձկան թերթերով Pro Armeniaի պէս, ծնած օրէն նշանաւոր թերթի մը հեղինակութիւն ունեցող ձայնը խափանել, քիչ մըն ալ թերեւս պիտի զուարեւորուի մէջ և վերջ ի վերջոյ ձեր միւս ընկերներուն պէս՝ պիտի երթաք Պոլսոյ հարէմներէն մէկուն խորը ձեր անբաղդութիւնը լաւ... ողորմելի մարդիկ...

Ձեր դուրս թափած թոյնը մեզի զըզւանք կը պատճառէ և մեր արհամարհանքը կը շարժէ. ինչ կրնաք ընել դուք Հայ ազգին. արդեօք ձեր այդ զրաքանութիւններով կը յուսա՞ք կասեցնել Հայ յեղափոխականները իրենց առաջադրած նպատակէն. ո՛չ. չարաչար կը սխալիք:

Մեզի կ'առաջարկէք միանալ ձեզ հետ, միայն Սուլթանը տապալելու համար. այսինքն մենք ձեզի նման ապուշներու տեղ յոգնինք, որպէսզի յաջողութեան պտուղը դուք առանձինն վայելէք. իրաւ որ այսչափ ապուշի պարզամտութիւն ունենալն իր չէինք գիտեր:

Այո՛, Ահմէտ Րիզա՛, Հայերը կը ձրգտին և պիտի ձգտին իրենց անկախութիւնը ձեռք բերել, ինչ որ ալ պատահի. Հայ ազգը շատոնց վարժուեցաւ Քիւրտերու, Ձէրքէզներու հրացանի հարուածներուն. բան մը որ ա՛լ պիտենք չ'սարսափեցնել: Գալով միւսներուն, արդէն ձեռք բերուն եկածը կ'ընեն զմեզ խեղդելու համար. կը հարցնենք ձեզի թէ՛ Կեսար՝ Ռուպիդոնը անցնելէն յետոյ արդեօք ետ դարձա՞ւ...:

Հոգ մ'ընէք, փտտած մարդիկ, տասնեկիններորդ դարը ազատութեան արեւը բերաւ ձեր բռնակալութեան տակ հեծող շատ մը տառապող ազգերու. հարկաբաններորդ դարն ալ մեր անկախութեան արշալոյսը կը բերէ մեզի. և գիտե՛նք, վճուկ բարեկամ, որ այն հանդիսաւոր օրը, սեխիս մը հագած, գլուխդ մոխիր ցանելով, պիտի երթաս Տէրվիշի մը պէս մզկիթի մը անկիւնը նստիս, ու ողբեր կարդաս վրժած գործիք վրայ:

Յուսախաբուէ՛, դառնապետ գա՛լ, Հայերը երբէք թուրքերու բարեկամ չեն կարող ըլլալ. ձեր քառան շատոնց առնուած է: Իսկ մենք կը վստահինք մեր բուն ուժերուն վրայ, յաւիտեան կուր մղելու ձեր դէմ:

Եւ եթէ չկարենանք հասնիլ մեր այնչափ փայտաբայած սուրբ նպատակին, զոնէ անպատում պարծանքը պիտի ունենանք մեր անկուսին հետ քաշել ամենէլ Օսմանեան փտտած ու խարխուղ պետութիւնը, անհետացման և անյուշութեան անգուն գին մէջ:

Ա՛յն ատեն միայն մեր նահատակներուն ուրուականները պիտի ուրախանան իրենց գերեզմաններուն մէջ:

Հասկցա՞ք, Ահմէտ Րիզա՛:  
Առ այժմ՝ ձեզի միակ խրատս.  
Ne sutor ultra crepidam!

ԼԵՒՈՆ

Տէր և Տիկին Գրիգոր Եղապեան և որդին, Տէր և Տիկին Փիլիպպոս Եղապեան և որդիք, Տէր և Տիկին Աւրահամ Եղապեան և որդիք, Տէր և Տիկին Ապահ պետրոսեան, Տէր և Տիկին Գէորգ Եղապեան և որդին, Տէր և Տիկին Գրիգոր Գրմազմեան, Տէր և Տիկին Կարապետ Գրմազմեան, Տէր և Տիկին Մինաս Գրմազմեան, Այրի Տիկին Լուսինա Մ. Մելիքեան, Տիար Յովհաննէս Մելիքեան, Տէր և Տիկին Տէր Սեդուկեան և որդին, Տէր և Տիկին Իսաիկ Ոսկերչեան, Տէր և Տիկին Մարտիկ Բրուտեան, Տէր և Տիկին Եղապեա Չէքմէշեան իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն ամեն անոնց, որոնք բարեհաճեցան չորեքշաբթի օր ներկայ գտնուիլ

ՏԻԱՐ ՍԵՂՈՒՔ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ

յուզարկաւորութեան տխուր հանդիսին, և իրենց ցաւակցութիւնը յայտնել հանգուցելուն ծնողաց, հօրեղբարց, ազգականաց և ընտր բարեկամաց:

Պ. Սեղաք Եղապեանի յուզարկաւորութեան առթիւ, «Արշալոյս» յի յարգելի բարեկամ Պատ. Մ. Յ. Գնաճեան հետեւեալ դամբանականը խօսած է, որոյ հրատարակութիւնը յարմար կը դասենք:

Երեսասարգ մըն ալ մեզմէ անուեցուցուցին, Կենաց սեմին վրայ հաղիւ իր ոտքերը դրած՝ մահուան հովը դայն կը խորշակահարէ: Հաղիւ թէ սկսած էր բողբոջիլ կը խորշոմի դուրախար. կը թառամի՛ եւ մահուան սուր մահադղը մի անգութ հարուածով կը խէզ դայն իր սիրելեաց գիրկէն: Լի՛ յոյսերով, անկախութիւններով, կարելիութիւններով կենաց բաժակը մինչ իր շրթանց կը մօտեցնէր՝ յանկարծ անտեսանելի ձեռք մը դայն կը տապալէ և ամբողջ պարունակութիւնը յօրն կը ցնդի: Նուր հաղիւ ճամբայ կ'եկէ իր ձեռքով առաքատները հովին դէմ բացած և անա փոթորկալից ամպեր երկնից աստեղազարդ կամարը կը մթազնեն և կուտաղի մըրիկ մը արտալից ծովուն ալիքները կը յուզէ և կեանքը կը նաւարկի: Մութ է տեսարանը, սեւ վարդոյր մը մահուան գետին վրայ կը տարածուի, և միւս եզերքը անտեսանելի կ'ընէ մեր կորովարիւր աչքերուն: Ինչ կայ անդին. ինչ է մահուան վախճանը. ո՞վ կրնայ թափանցել այս աղլամղջային խաւարը և յուսոյ և լուսոյ ճառագայթ մը ցոլացնել մեր ստորափոխար միւսքերուն: Ո՞վ մեզ Պղատին, խօսի՛ և եթէ կրնաս խաղաղեցուր մեր վրդոված սիրտերը. մահը վախճան է կենաց, թէ յուսանք և սպասենք ուրիշի մը:

Մինչ կը կանգնէինք մահուան հանդէպ աւելուր զգացումներ մեզ կը պատեն: Ո՛չ, այս սեւ փոսին մէջ կը վերջանայ ամեն բան. Աստուծոյ դերագոյն ստեղծագործութիւնէն՝ մարդէն, այս դալուկ դէմքը, աղօտ աչքերը և անզգայ կաւի զանգուածն է որ միայն կը մնայ իբրև նշխար: Ինչպէս որ ամպը կը ցրուի և կ'երթայ, մարդ ալ այնպէս պիտի անհետանայ: Շուքի մը. խոտի մը, երազի մը պէս ունայնութիւն է այն: «Հող է իր դուն և հողին պիտի դառնաս» է անոր ճակատագիրը:

Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ. թող ունայն բանն ինչ որ կ'ուզեն. բայց բանականութիւնը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնը և յայտնութիւնը միաբերան և միահամուռ տարբեր պատասխան մը կուտան: Նայէ սա հոյակապ պալատին. ինչ ջանք, ինչ աշխատութիւն վատնուած է դայն կատուցանելու համար: Անոր հազուագիւտ մարմարիոն սիւները, հսկայաձեւ արձանները, հաստատուն պատերը, ճարտարա-

պետական հիւսուածքը, գեղարուեստական նրկարները տարիներու աշխատութեան և հարիւրաւոր գործաւորներու ճակատի քրտանց արդիւնքն է: Ինչու՞ չի նուաճ է այս պալատը. ինչ նպատակի ծառայելու համար: Ոչինչ, միայն թէ մի քանի օր անիկա պիտի ցուցադրուի և մարդիկ դայն դիտել և անոր վրայ հիանալէ յետոյ, անոր ստորերկեայ խուցերէն միոյն մէջ պահուած ուժանակը պիտի պայթի և ամբողջ հսկայ կազմութիւնը յերկիր տապալէ: Ապու՛շ, ինչ կ'ըսես. կարելի բան է այսպիսի յիմարութիւն մը մտաբերել: Այս ազնիւ շէնքը նպատակի մը համար կ'առուցուած է. անոր կեանքը չը կրնոր միայն մի քանի օրուան համար ըլլալ. այսպիսի անարժէք նպատակի մը համար այսչափ աշխատութիւն վատնել հակասական է: Նայէ անոր կարասիներուն, հանգստաւտ օթեակներուն ամեն բան յարմարուած է երկար ժամանակեայ բնակութեան: Անոր մէն մի քարին վրայ նպատակ հաշիւ, տեւականութիւն կը կարգացուի. դու ինչպէ՞ս ճշտես թէ վաղը սակէ քար քարի վրայ պիտի չ'մնայ, բոլորը հրոյ ճարակ պիտի ըլլայ այնպէս որ այլեւս անոր տեղը չ'ճանչնայ զանիկա:

Հապա մարդկային տաճարը իր բոլոր վեհազոյն յարմարութիւններով ինչ պիտի ըլլայ. կարելի՛ է երեւակայել թէ այս կարճ և անցողական կեանքը ամենն է. մարդը չի ներու համար վատնուած աշխատութիւնը կը փոխարինուի սա մի քանի վշտալի օրերու կեանքով: Ո՛չ. անոր մարմնոյն կազմուածքը, անդամներուն ներդաշնակութիւնը, հոգւոյն վեհ փափաքները. միտքին ազնիւ կարողութիւնները — բանականութիւն, երեւակութիւն, ըմբռնումն, կամք — ասոնք սակէ զատ ուրիշ կեանք մը մասնանիչ կ'ընեն: Մարդն ալ վերեւ յիշուած պայտաին պէս չկրնար միայն մի քանի օրուան յուրադրութեան համար ստեղծուած ըլլալ:

(Մնացեալը յաջորդով)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Գօլէսպէրկ 12 փետրուար. — Տուրքերսթըրթ և Նօրվալլընթի հիւսիսը շրջապատող բլուրները Պօէրներով լեցուն են: Հրացանի հարուածներ փոխանակուած են: Նորէն կ'ըսեն թէ Տը Ուէթ Օրանտ անցած է և Ֆիլիքսթաուն կ'ուղղուի. հինգ զօրագունդեր զինքը կը հաւաքեն: Մեծ գործունէութիւն կը տիրէ սահմանազլխին երկայնքը:

Լոնտոն 12 փետրուար. — Ժանտախտի բազում դէպքեր պատահած են Բարի մէջ:

Կ. Պոլիս 12 փետրուար. — Բարձրագոյն դուռը պաշտօնապէս ճանչցած է Աղէքսանդրիոյ Յունական ընդհանուր հիւպատոսարանը:

Պօմպէյ 13 փետրուար. — Ժանտախտի նոր համաճարակ մը ինկած է քաղաքին մէջ: Անցեալ շաբաթ 2000 մահեր պատահած են որոյ 922 ը ժանտախտէ: Տեղական իշխանութիւնը հիմա փոխանակ ժանտախտին տարածման դէմ կուռելու իրենց բուրբ ճիգը կը համախմբեն վարակեալներուն օգնութեան հասնելու:

Պատրիս 13 փետրուար. — Այս իրիկուն ծանր ապտախտական յարժուներ պատահեցան քաղաքին մէջ. վնասները յարձակմամբ ցրուած են ամբողջ:

Պէլկրատ 13 փետրուար. — Աղէքսանդրը թագաւորը յայտարարութիւն մը հրատարակած է, որով կը հաստատէ Սերպիոյ երախտագիտութիւնը Միլան թագաւորին որ երկրին անկախութիւն տուաւ:

Բարիզ 13 փետրուար. — Յունաստանի թագաւորը հոս ժամանեց:

Պէշկրատ 13 փետրուար. — Արքայական անձնական գանձը իր վրայ կ'առնէ վրձարել Միլան թագաւորին պարտքերը :

Բորթ-Էլիզապէթ 14 փետրուար. — Իմբէրիալ Եօմէնրիէն 49 զինուոր գերի բռնուած են, Վիլլոմօրի մօտ պաշարակառք մը հետեւորդած առեւնին : Կառքերը այրուած են :

Մատրիտ 14 փետրուար. — Բաղաքին մէջ պաշարման վիճակ հրատարակուած է :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵԱԳՈՒՊ բուշա Արթին, մինչև էտֆու Վերին Եգիպտոսի գաղտնիքը քննելէ յետոյ Գահիրէ գարձած է :

Պ. ՄԲԱՍՍԻ Թունական հիւպատոսարանի վարիչը երկուշաբթի Բրիտանական հիւպատոսարանը գնաց և Լորտ Բրոմէրի մատուց Վիգթորիայ թագուհին մահուան առթիւ Գահիրէի Թունական գաղթականութեան ցաւակցական մէկ ուղերձը :

Այդ 4000 ստորագրութեամբ ծածկուած ուղերձը առնելուն պէս, Լորտ Բրոմէր Պ. Սքասսի պաշտօնական նամակ մը դրկած է, որուն մէջ կը շնորհակալուի Յոյնիստան առ Անգլիա ունեցած համակրութիւնը և կ'ըսէ թէ՛ Յոյները այդ գէն միշտ փութկոտ գտնուած են Անգլիոյ ցոյց տալու իրենց համակրութիւնը :

Ռիշթիթի, Կարիպալտի տղան, այս պահուս Գահիրէ կը գտնուի :

Հելուսի երկուստեք ՍԲԿԱՍԻՆՆԱՅՆ ԱՐԿԱՍԸ. — Նախորդ օրը Հէլուսի գծին վրայ Ատար-Նէպի կայարանին մօտ, կառախուսքը իր գծէն շեղեցաւ : Չորս հոգի մեռած և 23 հոգի վիրաւորուած են :

Այս ցաւալի արկածին պատճառը արցանողին անուշադրութիւնը եղած է :

Մեռնողները հետեւաններն են. ԱՏՄէտ էֆ. Փէհմի. 11րդ թիւ կառախուսքին տոմսադէտը :

Մուհամմէտ Հիւսէին և Մուհամմէտ Սէյիտ. զինուոր, և փոքրիկ խարչիկուհի մը, որուն անունը գեռ անծանօթ է :

Վիրաւորեալները, որ հիւանդանոցին մէջ կը դարմանուին, հետեւաններն են. Մուրկան Ապտալլահ. Հիւսէին Հասան :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԵԱՆՑ ԹԱԳՈՒՀԻՆ

(Շարհ. Աստուծոյ քիւնն)

Միլիթա մարդուն ականջէն կամաց մը սախաքը փոխաց :

— Մինչև այս արարին վերջը ինծի սպասէ, պիտի գամ :

Այս երեկոյին իր գերը այնքան սքանչելի կերպով խաղաց, որ իր վրայ զմայլողները ալ աւելի հիացուց. Երբէք նա այնչափ շքեղ, այնչափ գեղեցիկ, այնքան խոնկ տեսնուած չէր, իր գերին մէջ տարբերակ խանդ մը, արտաքոյ կարգի ետանդ մը ցոյց տուաւ : Եւ երբ որոտընդոտ ծափահարութիւններէն վերջ վարագոյրը իջաւ, նա շուտ մը իր հանգստի սենեակը վազեց, ուր Պ. Տամպրէօն կ'սպասէր. փութով սպիտակ մուշտակին մէջ փաթթուելով, առանց թագուստ հրաշալի տարազը և աղամանները հանելու : անցաւ ա'յն հանդիսատեսներու խումբին մէջէն, որոնք կը փութային իրեն յարգանք մատուցանել :

— Մեկնի՛նք, ըսաւ Պ. Տամպրէօնին. ես իմ կառքս ունիմ, առաջնորդէ՛ զիս :

Ապու Պաքր Մուխթար. Մուհամմէտ Սիւլէյման Սիտի Սէյիտ. Ապտա. Իպրահիմ. Մուպարաբ և չորս կիներ, Չէյնապ Ռիսք. Կամիլա. Փարահ և անծանօթուհի մը, որ գեռ խօսելու անկարող է :

Պ. ԱՆԱԹՕԼ ՅԲԱՆՍԻ ԸԼԼԱԼԻՔ համակրական ցոյցին մէջ, Նախաձեռնարկ Պատ. Մամախուսթը կատարեալ յաջողութիւն մը ունեցաւ, պատրաստել տալով արծաթեայ ընտիր կաղամար մը և զրիչ մը, որոց երկուքին ալ վրայ Հայկական նուրբ ճաշակը և ճարտարութեամբ կը փայլին :

Գրչին վրայ գեղեցիկ տաւերով հայերէն և ֆրանսերէն փորագրուած է «ԱՆՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԻՆ» երկու նրբիմաստ բառերը :

Վաղիւ, ինչպէս կը տեղեկանանք, Նախաձեռնարկ Մամախուսթին կողմէ հրաւիրուած տասներկու ազնիւ անձնաւորութիւններէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը, վերոյիշեալ ժողովրդական փոքրիկ նուէրը պիտի մատուցանէ Հայասէր Պ. Անաթօլ Յրանսի, ուղերձով մը միասին :

ԵՐԵՎԱՆ. Վսեմութիւն Պօղոս փաշա, իրեն Եուպրատի կալուածը հրաւիրած էր իր բոլոր բարեկամներն ու հետաքրքիրներ, իրեն հնարած ինքնաշարժ արօրին փորձը հրապարակաւ կատարելու համար :

Նորին Վսեմութեան այս նոր գիւտը, որ երկրագործութեան մեծ զարկ մը պիտի տայ, շատ յաջող փորձեր կատարած է, ինչպէս մեզի կը հաղորդեն. և արդէն՝ Ն. Վսեմութեան հնարած արօրը 1900ի Փարիզի ցուցահանդէսին մէջ ալ ի ցոյց դրուած և ֆրանսական կառավարութիւնէն սակի շքանշանի և Պատուոյ Լէգէօնի մեծ խաչին արժանացած էր :

ԱՆՅԵԱԼ օր Աղգ. առաջնորդարանի փաստաբան Տիար Յակոբ Ասատուրեան, Խառն Գատարանի առջև շահեցաւ կարեւոր դատ մը, որ կատարուած նշանախօսութեան մը, առանց ո՛ր և է բանաւոր պատճառի դրժուածն ծագում առած էր :

Գատարանը 400 ոսկեայ տուգանքի դատապարտեց երիտասարդ փեսան, որ իր ծնողաց կամքէն կախուած և անոնց ընտրած մէկ աղջկան հետ ամուսնացած է արդէն :

Վայրկեան մը վերջը կառքը սրարշաւ կ'երթար մուկ և նոյն փողոցներուն մէջէն :

Դեկտեմբերի նուրբ անձրեւ մը կը տեղար, որը աւելի կը ակրեցնէր այս անձանայ թաղերը : Իրենց ընկերական գիրքով ու կեանքով ա'յնքան իրարմէ հեռի էակները — խոնարհ խառնութեամբ և համբաւաւոր դերասանուհին — լուռ ու մունջ իրարու քով նստած էին :

Դեռատի կիւնը անմիջապէս ընդունած էր իր շքեղ թագուստի հագուստներովը և թանկագին գոհարներովը զարդարուած, փոքր մահամերձին քով գնալ և անոր երազը իրականութեան փոխել, թերևս այս միջոցով զայն բժշկելու համար :

Արդեօք նա անոր այս բարիքը պարտական չէ՞ր. տղային զինք տեսնելու ատեն, գոչած «Կեցցէ՛՛ններուն փոխարէն» :

Պ. Տամպրէօն դերասանուհւոյն կը նայէր յուզեալ և տագնապալից. լոյսերուն շողը նոր փայլեր կ'աւելցնէին զինք ծածկող աղամանդներուն անդրադարձումներով :

Կառքին մէջ կ'նոջ և ծաղկանց զուարթ անուշահոտութիւնը կը բուրբէր :

Միլիթա սիրուն էր. շատ աւելի սիրուն քան երբէք. Պ. Տամպրէօն չափազանց ուրախ էր, մտածելով որ գուցէ իր տղան չի մեռնիր. ուստի բռնեց Միլիթա մատանեզարդ փոքրիկ ձեռքը և կը սեղմէր սախաքերը թօթովելով :

Մեր առաջիկայ թիւերով եթէ պարագաները թոյլ տան մեզ, այս խնդրոյ մանրամասնութիւններովը զբաղել անօգուտ չենք նկատեր :

ՏՕՔԹ ԲՕՐՆՓԷԼՏ

ՎԿՍԵԱԼ ՎԻՆԵԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիեննայի գըլխաւոր հիւանդանոցներուն : Մամադէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական ախտի, կոկորդի, թիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 էն 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 էն 5, իր տունը Շէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔՍԱՆԳԻՄԱ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼՍԷՆ Անգլիական թերթերուն կը հաղորդեն թէ՛ Մուշի Առաջնորդ Բաբկէն վարդապետ, Թուրքերուն ու Քիւրտերուն կողմէ պատրաստուած կտորածի մը համար բողոքած և ուշադրութիւն հրաւիրած ըլլալով, իբր խոսվարտը Պոլիս բերուած է ոստիկանական հսկողութեամբ : Յիշեալ եկեղեցականը հիմակ բանտարկուած կը մնայ Բերայի Թագոսի թաղը, Օրմանեան Պատրիարքին անձնական բնակարանին մէջ :

«Նոր Կեանք» այս լուրը հաղորդելով ԲԱՆՏԱՊԵՏ անունը կ'աւելցնէ Օրմանեան Պատրիարքին անուններուն վրայ :

ԴԱՐՁԵԱԼ նոյն թերթէն կը տեղեկանանք թէ՛ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը կատարուելու եղանակը վերջապէս սրբազրուած է. այսինքն, Երևոյցին պիտի հաղորդուի այն եպիսկոպոսներուն անուններն, որոնք ընտրողական ժողովէն Կիլիկիոյ տան կրօնական վեհապետութեանը պիտի կրնան կոչուիլ. և Սուլթանը պիտի ջնջէ ցանկէն այն անուններն, որոնք իրեն անհամոյ կ'երևան :

«Նոր Կեանք» Օրմանեան-Տատեանի նենդութիւնը կը համարի Հայ եկեղեցւոյ

— Ծնորհակալութիւն, Տիկին, շնորհակալութիւն, իմ փոքր զակիս, կ'նոջս և ինձ համար :

Բիէն տագնապ մը ունեցաւ և անկողնոյն մէջ կը շարժէր :

«Թագուհի՛ն կուզեմ. թագուհի՛ն. կը կրկնէր իր տագնապին մէջ. ս'ն. թող նա ինձ խօսի. թող իր գեղեցիկ շրջագլխաւոր աստղիկները ցոյց տայ ինձ» :

Եւ իր անկողնոյն վրայ կ'անդնելով.

— Մայրի՛կ, ինձի բեր անիկայ. եթէ կուզես՝ գ'նա փնտսէ՛ զայն. թող շուտ մը գայ. թող շատ շուտ գայ :

Տիկին Տամպրէօն, ձեռքերը ծնկացը վրայ կարկամած և գլուխը ծոած կուլար և չէր գիտեր թէ՛ ի՞նչ ընէ. ի՞նչ ըսէ : Իր ամուսնոյն խնդրի մը պէս մեկնիլը աստած էր և չէր գիտեր թէ՛ ի՞նչ ընելու գացած էր նա :

— Ի՞նչ կրնայ փորձել թշուառ մարդը, քանի որ բժշկութիւնն իսկ ինքզինքը անկարող յայտարարած էր :

Յանկարծ տղան ուրախութեան ճիւղ մը արձակեց :

— Մայրի՛կ, նայէ՛, անիկայ է, Ձեանց թագուհի՛ն :

(Շարունակելի) Թարգմ. ՕՆՆԻԿ

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պաշարի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Օլթէլի ճիշդ դիմաց , Գաֆէ Տը Լա Պուրօի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներքն են եւ ասոնցմէ մինչեւ ցարբ 17,000,000 ծախուած է :

400 Կ աւելի վիսյականներով եւ մեքայներով վարձատրուած , երաշխաւորեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐՔՈՒՆԻԲԻՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԵՒ ԹՍԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յասկանչիս :

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ



Ձրի դասեր և նորոգութիւններ , ՍԻՆԿԷՐ մեքենայից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններն մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՄԱՆԿԱՐԱՐՉ ՏԻԿԻՆ ՍՈՑԻԱԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Եարա-Ապսխլ-Ագիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Եարա Ապսխլ Ագիզ , Ալի փաշա Շէքիֆի պարտիզին դիմաց , Ահմէտ պէյ Ապսխլ Բազարի 20 թիւ սեփականութեան մէջ :

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիբէրնակ ազգայնաց եւ նոյն իսկ օտարաց , աւելորդ կը համարուի զայն յանձնարուիլ իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում :

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ

Բանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՇ ի նիքէլ , կոթէն լալուղ սիրուն ժամանցոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչեւ 2500 ՂՐՇ : Լուչ պէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամանցոյցներ . սրտի և քծնուքի բազմազան Բանտի շներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան ձու նօկրաֆներու :

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՈՅԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարեւր գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլեար աւելի է :

Ս . ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ և Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է յնկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրուշակակի վրայ աւելի ապահովագրութիւններուն և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՂԾԱԿատար յԱղէքապարտիս :

գարերէ ի վեր ունեցած իրաւասութեան այս բռնաբարումը և Հայ ժողովրդին ուշադրութիւնը կը հրաւիրէ գործուած զեղծութիւններուն դէմ , որ վերաբնութիւն Սանմանադրոնքեան անուան տակ տեղի կ'ունենան :

Անցեալ տարի « Նոր Կեանք »-որչափ կը յիշենք- խորհուրդ կուտար արտասահմանի Հայերուն , որպէսզի Պատրիարքը հանգիստ ձգեն , մինչև որ սա՛ իր ազգատեցութեան մէկ նոր ապացոյցը տայ :

Նոյն թերթի չորրորդ տարի , թիւ երրորդի խմբագրական յօդուածէն կը հաստատենք թէ՛ փնտռուած նոր ապացոյցները լիուրի տրուած են : Տեսնենք այս անգամ ի՞նչ նոր խորհուրդներ տալ պիտի ուզէ արտասահմանի Հայութեան , « Նոր Կեանք »-ի Պատ . Խմբագիրը :

Կ . ՊՈԼՍՈՅ Բրիտանական Դեսպանը յաջողած է 100 Անգլ . լիւրայ գանձել Օսմանեան կառավարութենէն , իւր փոխարինութիւն , Վանի Անգլիական հիւպատոսարանի թարգման Պ . Սպորտօնի՝ Դիւրտերու կողմանէ վերաւորուելուն :

—ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ շարժումները երթալով կը զօրանան Մակեդոնիոյ մէջ և ամբողջ Գաւառը խիստ անհանդիստ վիճակի մը մէջ կը գտնուի : Յեղափոխութեան պայթումը մօտալուտ կը կարծուի և հաւանականութիւն չ'տեսնուիր թէ՛ Ռուսիա պիտի միջամտէ այս յեղափոխութեան :

Տարածայնութիւն կայ թէ՛ Սուլթանը գոհ է այս լուրերէն , որովհետև կուզէ զգացնել Յունաստանի թէ՛ Մակեդոնիոյ յոյները շարքուելու վտանգին մէջ կրնան ըլլալ , և այսպէսով թերևս , կրնայ Յունաստանի ուշադրութիւնը Կրետէն ուրիշ կէտի մը փոխանցել և Կրետէն արդի վիճակին մէջ թողուլ :

Կ . ՊՈԼՍԷՆ կ'իմացնեն Հասան ձէմիլ բաշայի մահը . Հասան ձէմիլ բաշայ իր բուն անունովը Տը Լօպէլ , Պէլժիական արքայական Կրքնատիէներու գունդին մէջ սպայ էր : Տը Լօպէլ որ 1877 ին բազմ փնտռելու համար արեւելք եկած և իսլամանալով լաւ դիրք մը շինել յաջողած էր , զօրաբաժնի զօրավար եղած էր (ֆէրիք) Թուրք բանակին մէջ և Սուլթանի թիկնապահ :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՍԹ 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1901

Table with 6 columns of numbers: 7995, 1222, 5831, 1342, 8885, 108; 325, 459, 595, 1103, 2226, 2237; 2717, 3018, 3871, 4267, 4522, 4600; 5267, 6151, 7729, 8832, 8897, 9013; 9231, 9300, 9583

192ԴԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԲՐԷՏԻ ՖՅՆՍԻՅԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ 15 Փետրուար 1901

Table with 6 columns of numbers: 337700, 289286, 325092, 357274, 366240, 390582, 391516, 394684, 395599, 120014, 156542, 174313, 215886, 236356, 248641, 259506, 260695, 278324, 3552, 47390, 56870, 76468, 104354, 106819, 113487, 115014

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ